

ՕՒ : loriberd lori <loriberd.lori@mta.gov.am>  
Tema : Re:Համայնքի զարգացման ծրագիր  
Կոմյ : lori qartughar <lori.qartughar@mtaes.am>

Ձեզ ենք ուղարկում Լոռի Բերդ համայնքի ավագանու 22.12.2016 թիվ 31-Ն  
որոշումը  
Լոռի Բերդ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին  
Առդիր` ծրագիրը word և pdf տարբերակներով



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԼՈՌԻ ՄԱՐԶ

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 31  
22.12.2016թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### ՈՐՈՇՈՒՄ

Համայնքի ավագանու հերթական նիստում քննարկման դրվեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը.

Ավագանին հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետը, քննարկեց և քվեարկության արդյունքում որշում կայացրեց ծրագիրն ընդունել ըստ ներկայացված տեսքի համաձայն հավելվածի:

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԶԵՌՆՊԱՀ
Ասուլյան Գագիկ			
Բալայան Հայկուհի			
Նազարյան Մարինե			
Պապիկյան Գևորգ			
Սերոբյան Կիմիկ			

Համայնքի ղեկավար՝

Խ. ԲԱԼՍԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ**

**ԼՈՒՈՒ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**



Հաստատվել է՝ համայնքի ավագանու << 22 >> 12 2016 թվականի թիվ 31 որոշմամբ

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջունի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	4
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	5
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 6	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	6
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	7
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	8
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	8
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	9
4. ՀՀԶՄ ֆինանսավորում.....	10
5. ՀՀԶՄ մոնիթորինգ.....	11

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի համագյուղացիներ.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման , ֆինանսական , տնտեսական , բնական և մարդկային ռեսուրսների գնահատման ` արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում ` համայնքի զարգացում, բավարարելով ներկայի կարիքները ` առանց վնասելու գալիք սերունդներին , և համայնքի տեսլականի իրականացում :Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2017-2021թթ. Չարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը,այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները , պարտավորությունները, երկրի տնտեսական, քաղաքական առկա իրավիճակը :Համայնքի զարգացման ծրագիրը իր մեջ ներառում է համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծականը և գնահատումը , համայնքի տեսլականը , ՀՀԶԾ-ի հիմնական նպատակների առկայությունն ու սահմանումը , ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, զարգացման ծրագրի մոնիթորինգը: Համայնքի հետագա հինգ տարիների բնականոն ընթացքն ապահովելու, ազգաբնակչության առջև ծառայած խնդիրներն լուծելու , կայուն և զարգացած համայնք ունենալու հեռանկարին հասնելու համար առաջարկում եմ բոլորիս համախմբվածությունը կատարվելիք գործընթացներում , որպեսզի այդքան բաղձալի ծրագրերն ու մեր համայնքը զարգացած ու հեռանկարային տեսնելու ցանկությունը համախմբվածության և ջանասիրության արդյունքում դառնա իրականություն:


Հուսով եմ , որ սատար կկանգնեք , որպեսզի կարողանանք  
իրականացնել մեր առջև դրված խնդիրները , համայնքը դարձնենք  
բարեկեցիկ և զարգացած համայնք :

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին ,  
համայնքաբնակներին , և շահագրգիռ կազմակերպություններին և  
անհատներին , որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի  
իրականացմանը , հասարակական կյանքի ակտիվացման  
գործընթացներին :

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒ

### 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Լոռի Բերդ համայնքը հիմնադրվել է 1750- ական թվականներին, ծովի մակերևույթից բարձր է 1380 մ, վարչական տարածքը կազմում է 520.04 հա, որից համայնքի բնակատեղը կազմում է 36 հա :Լոռի Բերդ համայնքը գտնվում է Լոռու մարզի Չորագետ և Ուռուտ գետերի միջնահատվածում, Ստեփանավան քաղաքի արևելյան հատվածում,պատմական «Լոռե բերդաքաղաքի» ավերակների մոտ , պատմական նշանակություն ունեցող դամբարադաշտերի վրա:Հեռավորությունը Ստեփանավան քաղաքից 2 կմ է, մարզկենտրոնից 38 կմ: Լոռի Բերդ համայնքը սահմանակից է 4 այլ համայնքների վարչական տարածքներին:Համայնքի տարածքով է անցնում Ստեփանավան-Ալավերդի ավտոճանապարհը:Համայնքից 1.5 կմ դեպի արևելք կառուցված է « Աշոտ- Երկաթ» պատմամշակութային ամրոցը, որտեղից գյուղացիները տեղափոխվել են այժմյան բնակավայրերը, կառուցվել է 9-11-րդ դարերում, այժմ գտնվում է կիսաավեր վիճակում:Շրջակայքում կան միջնադարյան կառույցներ՝ Լոռե բերդաքաղաքը՝ 10-րդ դար, եկեղեցի 12-13-րդ դարեր, կամուրջ՝ 10-13-րդ դարեր , բաղնիք՝ 12-13-րդ դարեր, գյուղատեղիներ և եկեղեցի՝ դարմանաթաղ գյուղատեղում՝ 10-րդ դարեր:





Համայնքի աշխարհագրական դիրքը նախալեռնային է , կլիմայական պայմանները անբարենպաստ են :Տարվա եղանակներից անհամեմատ լավ է աշունը , գարունը ուշ է բացվում , հաճախակի քամիներով , իսկ ամառը տաք է , լինում են նաև կարկտահարություններ:Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ<<անասնապահությամբ>> և հողագործությամբ : Համայնքում արտադրվող գյուղմթերքներ են համարվում կաթը , միսը , կարտոֆիլը , որոնց սպառման շուկա է համարվում Ստեփանավան քաղաքը , իսկ հիմնականում սպառում են վերավաճառողները:Սեփականաշնորհման ժամանակ 1 ծխին հասանելիք վարելահողը կազմել է 4500ք/մ վարելահող, որը չի բավարարում 6



անասունների կերի ապահովման և ընտանիքի կարիքները հոգալու համար: Բնակլիմայական անբարենպաստ պայմանների և որակյալ սերմնացուի բացակայության հետևանքով գյուղացիները իրենց սեփական վարելահողերը օգտագործում են հիմնականում որպես խոտհարքներ:110 հա վարելահողից ընդամենը 15-20 հա է օգտագործվում մշակովի կուլտուրաների համար<< ներառյալ տնամերձը>>:Հացահատիկային կուլտուրաների , ցանկամշակության և բերքահավաքի տեխնիկայի բացակայության պատճառով ձգձգվում են բերքահավաքի աշխատանքները , որոնք հանգեցնում են բերքի կորստին և հաճախակի տեղացող անձրևների դեպքում՝ բերքի փչացման:Համայնքն ունի հիմնական դպրոց, որտեղ ուսանում են 29 աշակերտներ: Համայնքն ունի նաև կիսաքանդ մշակույթի տուն <<ակումբ>>, գրադարան և բուժկետ:

Լոռի Բերդ համայքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու ավագանու 5 անդամները:Լոռի Բերդ համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 4 անդամներից :

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոռի Բերդ համայնքի բնակչությունը 2016 թվականի հունվարի 1-ի մարդահամարի տվյալներով կազմում է ` 414 մարդ, 126 ծուխ:Համայնքի հասարակությունը ըստ սոցիալական խմբերի դասակարգվում են հետևյալ կերպ`

1	Բնակչության թվաքանակը	414 մարդ
2	Տղամարդիկ	224 մարդ
3	Կանայք	190 մարդ
4	Երեխաներ 0-15 տարեկան	72 մարդ
5	16-62 տարեկան	139 մարդ
6	63 և բարձր	43 մարդ

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համայնքի վարչական տարածքը կազմում է ` 408 հա , որից `

1	Վարելահող	82 հա
2	Խոտհարք	67 հա
3	Արոտավայր	105 հա
4	Տնամերձ	39 հա
5	Անօգտագործելի	15 հա
6	Փողոցներ	4 հա
7	Քարի հանք	4 հա
8	ամրոց	12 հա

Որից սեփականաշնորհված է ` 179 հա :

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Լոռի Բերդ համայնքի տարեկան բյուջեն կազմում է 9.376 ՀՀ դրամ: Սեփական եկամուտները կազմում են ` 22% :

Համայնքում ազգաբնակչությանը մատուցող ձեռնարկություններ չկան:

Համայնքում արտադրվող գյուղմթերքներ են հավարվում ` կաթը , միսը , կարտոֆիլը , որոնց սպուման շուկա է համարվում Ստեփանավան քաղաքը, իսկ հիմնականում սպառում են վերավաճառողները:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 408 հա, համայնքի տարածքում է գտնվում <<Լոռե բերդաքաղաք>>-ը, որը զբաղեցնում է 39 հա, Լոռե բերդաքաղաքը կառուցվել է 9-11 –րդ դարերում, այն կարող է նպաստել համայնքում զբոսաշրջության զարգացմանը: Լոռե բերդաքաղաքը Հանրապետության պատմամշակութային վայրերից մեկն է , այն հայտնի է իր մինադարյան կառույցներով :

Համայնքում տարեցտարի ավելանում է զբոսաշրջիկների թիվը: Ինչպես ժողովուրդն է սիրում անավանել <<Աշոտ- Երկաթ>>-ի բերդը իր ուրույն տեսքով և գեղեցկությամբ գրավում է հազարավոր զբոսաշրջիկների , որոնք մի անգամ տեսնելով անառիկ ամրոցը ուղղակի հիանում են հնամենի այդ կառույցով :

Համայնքում գործում է միակ հիմնական դպրոցը, որը նախատեսված է 80 աշակերտների համար, սակայն դպրոցում 2016 թվականի դրությամբ ուսանում են համայնքի շուրջ 29 աշակերտներ , սակայն ` 2015 թվականին դպրոցում ուսանել են համայնքի շուրջ 31 աշակերտներ , իսկ 2017 թվականին համայնքում կուսանեն շուրջ 35 աշակերտներ: Համայնքում նախադպրոցական , արտադպրոցական , ԲՈՒՀ- եր չկան: Համայնքում գործում է միակ առողջապահական հաստատությունը ` Բուժկետը: Համայնքի 126 տնտեսություններից 24 տնտեսություններ օգտվում են ընտանեկան նպաստից: Համայնքում զբաղվածության մակարդակը շատ ցածր է , համայնքի ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ << գյուղատնտեսությամբ >> : Համայնքի 15 ընտանիք աշխատում են համայնքի հիմնական դպրոցում և համայնքապետարանում: Համայնքի 10 ընտանիք աշխատում են Ստեփանավան քաղաքի տարբեր հիմնարկ- հաստատություններում << ոստիկանություն , Զինմաս , պոլիկլինիկա և այլն >> Համայնքում նախատեսվում է հանրապետական հրատապ ծրագրով համայնքի նախկին բուժարանի շենքը վերանորոգել և վերանվանել արարողությունների և հանդիսությունների սրահ , որը շատ կարևոր եմ համարում համայնքի ազգաբնակչության կողմից բոլոր տեսակի միջոցառումների կազմակերպման համար: Մի կողմից շենքը կփրկենք քանդվելուց և ոչնչանալուց , մյուս կողմից կլուծվի համայնքում տարատեսակ միջոցառումների անցկացման խնդիրը: 9

Ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովվելու համար՝ անհրաժեշտ էմ համարում փորձել գտնել և ընդգրկել տեղացի և արտասահմանցի բարերարների՝ վերոհիշյալ սրահի վերանորոգումից հետո ներքին կահավորանքի և սպասքի ձեռքբերման գործում :

Որպեսզի կարողանանք իրականացնել բոլոր 5 տարիների համար նախատեսված կատարվելիք բոլոր աշխատանքները , կարևոր էմ համարում համայնքի ազգաբնակչությանը մասնակից դարձնել համայնքի առջև ծառայած խնդիրների և նախատեսված ծրագրերի իրականացման և լուծման հարցերին:

Վերընշված խնդիրների լուծումն ապահովելու և նախատեսված ծրագրերի բնականոն ընթացքն իրականացնելու գործում համայնքի ազգաբնակչությանը ոգևորել սեփական եկամուտների հավաքագրման հարցում , որպեսզի հետագայում հնարավոր լինի ապահովել հետագա 5 տարիների համար համայնքի բյուջեով նախատեսված և կատարվելիք ծախսային մասերը :

**ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ.**

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ	ԳԼԽԱՔԱՆԱԿԸ
Խոշոր եղջերավոր անասուններ	348
Այդ թվում կովեր	169
Արտադրող ցուլ	16
Հորթեր	125
Երինջ	43
Խոզեր	48
Այդ թվում մայրեր	5
Թռչուններ. Հավեր	812
Մեղվաբնտանիքներ	50

## 2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքի հետագա 5 տարիների զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ եմ համարում համայնքի սեփականությունը համարվող նախկին << Բուժարանի շենքը>> վերանորոգել և վերանվանել <<Արարողությունների և հանդիսությունների>> սրահի: << Բուժարանի շենքը >> նախկին քառամյա ծրագրում ընդգրկված է եղել , որի շրջանակներում կազմված է եղել ծրագրի նախագիծ և նախահաշիվ, համաձայնացվել է կոմունալ բոլոր ծառայությունների հետ , ֆինանսավորում չլինելու պատճառով աշխատանքներ չի իրականացվել , ուստի անհրաժեշտ է գտնել ֆինանսավորման աղբյուր՝ նախատեսված ծրագրի իրականացումն ապահովվելու համար :

<<Բուժարանի >> շենքը կառուցվել է երկրաշարժից հետո՝ ռուս շինարարների կողմից 1991 թվականին , որի արտաքին չափերն են՝ 13\* 22 մ : Շենքում առկա են տարբեր չափերի 9 սենյակներ , սակայն այն չօգտագործելու << չշահագործելու >> պատճառով թալանվել է և գտնվում է անմխիթար վիճակում :

Շենքը վերանորոգելու և նպատակային օգտագործելու դեպքում կլուծվի համայնքի որոշակի խնդիրներ . կբացվեն որոշակի աշխատատեղեր համայնքի ազգաբնակչության համար , մասնավորապես՝ շենքում առկա 2 մեծ սենյակները միմյանց միանալու դեպքում կունենանք 16 \* 4.30 քմ մակերեսով սրահ , որը կօգտագործվի տարբեր միջոցառումների և հավաքույթների անցկացման համար. Այժմ գյուղացիները օգտվում են Ստեփանավան քաղաքի նմանատիպ սրահների ծառայությունից , որոնք շատ թանկ են :

Համայնքն ունի 3000 անուն գիրք , որից շենքային պայմաններ չլինելու պատճառով ընթերցողները չեն կարողանում օգտվել :Շենքի վերանորոգումից հետո սենյակներից մեկը կտրամադրվի գրադարանին , իսկ մյուս սենյակները կարող են ծառայել որպես խախասենյակ և սպորտային կամ երաժշտական դասասենյակներ :

Այսպիսով կլուծվի համայնքի ազգաբնակչության և երիտասարդության ազատ ժամանցի խնդիրը :

Ցանակալի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ եմ համարում գտնել և ներգրավվել բարերարների՝ ֆնանսական ներդրումներ կատարելու համար : Աջակցել նախագծա-նախահաշիվային աշխատանքների իրագործմանը: Բուժարանի շենքի վերանորոգման ավարտից հետո՝ համագործակցել World Wision ամերիկյան բարեգործական կազմակերպության հետ՝ գույքի և սպասքի ձեռքբերման համար:

World Wison միջազգային կազմակերպության համագործակցության շրջանակներում նախատեսված է հովանավորչական և կրթական ծրագրեր , ինչպես նաև Ամանօրյա, երեխաների պաշտպանության օրվա միջոցառումներ , տեխնիկայի, բեմականացման ցուցադրություններ , երեխաների հանգստի կազմակերպում ճամբարներում :Շինարարության արդյունքում ներգրավել համայնքի ազգաբնակչությանը՝ գործազուրկ խավին , այդ դեպքում կնվազեցնենք համայնքից արտագնա աշխատանքների մեկնողների թիվը : Այս հանգամանքը ևս կնպաստի համայնքում ծնելիության խթանման մակարդակը բարձրացնելու գործում :

Ուստի՝ համայնքի բնակչությունը կունենա զարգացած երիտասարդություն , կբարձրանա մատաղ սերնդի կրթական և հոգևոր զարգացման աստիճանը : Երիտասարդները կդաստիարակվեն հայրենասիրական ոգով: Երիտասարդության ժամանցի կազմակերպման համար կստեղծվեն բավարար պայմաններ՝ կբարձրանա երիտասարդների մշակութային կյանքի ակտիվացումը :

Նախատեսվում է նաև Համայնքային կենտրոնի կառուցում << նախկին գյուղական ակումբի շենքի վերանորոգում >>: Համայնքային կենտրոնի՝ << նախկին գյուղական ակումբի շենք>> - ում առկա են սենյակներ , որոնց վերանորոգումից հետո կահավորված սենյակները համայնքի ազգաբնակչության համար կտրամադրվեն որոշակի միջոցառումներ անցկացնելու , երիտասարդների ազատ ժամանցն անցկացնելու և այլ տարատեսակ միջոցառումների կազմակերպման գործում : Համայնքային կենտրոնի կառուցումը կնպաստի համայնքի զարգացմանը , քանի որ համայնքի ազգաբնակչության գործազուրկ բնակիչների համար կբացվեն որոշակի աշխատատեղեր , այդպիսով կլուծվի համայնքի գործազուրկ խավի աշխատանքի ապահովման հարցը , երիտասարդները կունենան բավարար պայմաններ իրենց նախասիրությունների և ժամանցն անցկացնելու համար :

Ծրագիրն իրականացնելու համար կպահանջվի 50.000000 – 60.000000 ՀՀ դրամ, պահանջվող ֆինանսական միջոցներն ապահովվելու համար՝ մշակել ծրագիր և ներկայացնել կառավարություն՝ հավանության չարժանանալու դեպքում՝ դիմել բարերարներին և միջազգային դոնոր կազմակերպություններին : Պահանջվող ֆինանսական միջոցների առկայության դեպքում պայմանագիր կնքել նախագծող կազմակերպության հետ նախագիծ և նախահաշիվ պատվիրելու համար, որից հետո հայտարարել շինարարության մրցույթ , մրցույթը հաղթող կազմակերպության հետ կնքել պայմանագիր և սկսել շինարարությունը :Ծրագրի իրականացման դեպքում նախևառաջ կիսաքանդ շենքը կփրկենք վերջնական ավերվելուց , երկրորդ՝ քանի որ շենքը գտնվում է համայնքի կենտրոնում , ապա ցանկալի կլինի որ համայնք այցելող յուրաքանչյուր ոք , այդ թվում զբոսաշրջիկները՝ համայնք մտնելուն պես հետաքրքրված լինեն բարեկարգված համայնքային կենտրոնով և կանաչապատված տարածքով :Համայնքի ազգաբնակչության համար կբացվեն առնվազն 15-20 աշխատատեղեր:

Նախատեսվում է նաև իրականացնել համայնքի գլխավոր փողոցի ասֆալտապատումը: Համայնքի կենտրոնական փողոցի <<6000 մետր>> ասֆալտապատումը խթան կհանդիսանա համայնքում զբոսաշրջության զարգացման համար , քանի որ համայնքի վարչական տարածքում գտնվող հնամենի <<Լոռե բերդաքաղաք>> պատմամշակութային ամրոցը իր ուրույն տեսքով , և հնամենի կոթողներով ու խաչքարերով զրավում է զբոսաշրջիկներին և Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր բնակչի :Համայնքի կենտրոնական փողոցի վրա է գտնվում նաև համայնքի հիմնական դպրոցը, փողոցի ասֆալտապատումը նույնպես շատ կարևոր է դպրոց մտնող յուրաքանչյուր աշակերտի և առհասարակ բոլորի համար:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են համարում համայնքի ազգաբնակչությանը մասնակից դարձնել համայնքային խնդիրների և նախատեսված ծրագրերի լուծմանը , լուծման ուղիներ գտնելու գործում ազգաբնակչության հետ կատարել առավել հասկանալի, և ապահովել ծրագրերի և խնդիրների իրականացման թափանցիկությունը :Ծրագրի իրականացումը կապահովի համայնքի բարեկարգմանը , ինչպես նաև համայնքի հիմնական դպրոցի ճանապարհը կլինի բարեկարգված և դյուրին անցանելի : Համայնքի ճանապարհի ասֆալտապատումը նաև խթանն կհանդիսանա համայնքի գործազուրկ ազգաբնակչությանը ներգրավելու կատարվող աշխատանքներին :

Ինչպես նշվեց համայնքային գլխավոր ճանապարհի ասֆալտապատումը կնպաստի նաև զբոսաշրջության զարգացմանը , քանի որ համայնքի գլխավոր ճանապարհով է անցնում 9-11 ը դարերում կառուցված Լոռե բերդաքաղաքը , կամ ինչպես ժողովուրդն է սիրում անվանել ` << Աշոտ – Երկաթ >> - ի պատմամշակութային բերդը , որտեղից 1925 թվականին գյուղացիները տեղափոխվել են այժմյան բնակավայրերը: Ներկայումս << Լոռե բերդաքաղաք>> պատմամշակութային անառիկ ամրոցը գտնվում է կիսաավեր վիճակում , սակայն այդ ամենով հետաքրքրված են հազարավոր զբոսաշրջիկներ և տարեցտարի գնալով վերջիններիս թիվն ավելանում է:

## 2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 9.376000 ՀՀ դրամ: Սեփական եկամուտները կազմում է 22% : Որպեսզի կարողանանք իրականացնել բոլոր 5 տարիների համար նախատեսված կատարվելիք աշխատանքները , անհրաժեշտ եմ համարում համայնքի ազգաբնակչությանը մասնակից դարձնել համայնքի առջև ծառայած խնդիրներին և նախատեսված ծրագրերի լուծմանը : Համայնքի բնակչությանը ոգևորել սեփական եկամուտների հավաքագրման հարցում , որպեսզի հնարավոր լինի հետագա 5 տարիների համար կատարել բյուջեով նախատեսված ծախսային մասերը :

Համայնքի ֆինանսական վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է տարբեր շահագրգիռ կողմերի , դոնոր կազմակերպությունների , հասարակական և բարեգործական կազմակերպությունների , անհատների նախաձեռնությունը և նրանց ներգրավվածությունը բարեփոխումներ կատարելու գործում ` նպատակ հետապնդելով համայնքի ֆինանսական աստիճանի բարձրացմանը :

Համայնքում 5 տարիների ընթացքում ` տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը` իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման , ոչ հարկային եկամուտների , տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման և գանձման արդյունավետ հավաքագրում:

ՀՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի արդյունքին , ինչպիսին ցանկանում է տեսնել համայնքը և նրա յուրաքանչյուր բնակիչ:Անհրաժեշտ է սերտորեն և արդյունավետ համագործակցել պետական կառույցների , միջազգային դոնոր կազմակերպությունների , տեղական ՀԿ – ի և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ :

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀՀԶԾ –ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն , ամփոփում , ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում :



	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ						
1.	Հողի հարկ	957,500	991,7				
2.	Գույքահարկ	436,9	495,2				
3.	Վարձավճար	625,5	625,5				
4.	Տեղ. տուրք	46,0	46,0				
5.	Այլ եկամուտներ	438,0	400,0				
6.	Ընդամենը սեփ. եկամուտներ	3163,9	2588,4				
7.	Դոտացիա	7313,7	7401,5				
Բ.	ԾԱԽՍԵՐ						
1.	Կառավ. ապարատ	9228,0	7487,273				
2.	Շրջակա միջավ. պաշտպ.	325,000	360,000				
3.	Բնակ. շինութ. կոմունալ ծառ.	12278,653	1088,407				
4.	Հանգ. մշակ. կրոն	130,000	100,000				
5.	Մոնիթ. պաշտպ.	370,000	350,000				
6.	Պահուստ. ֆոնդ	606	272,9				
7.	Գյուղատնտեսութ.	668,0	668,0				

## 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են համարվում բնակլիմայական անբարենպաստ պայմանները, գյուղնշանակության հողերի սակավությունը, հողերի անջրտիությունը , աշխատատեղերի պակասը , բյուջեի սղությունը: Համայնքում գարունը ուշ է գալիս. դիտարկվում են ուշ ցրտահարություններ << մայիս ամսին >> , նաև հաճախակի են լինում կարկտահարություններ:

Համայնքում առկա է համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող T -70 թրթուրավոր տրակտոր և կարտոֆիլի մշակության համար պահանջվող բոլոր սարքավորումները , սակայն այն արտադրված է դեռ սովետական ժամանակներում << հնացած է >> և պահանջում է ընթացիկ մեծ ծախսեր :

Համայնքում առկա է նաև մշակույթի շենքը , որը 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո խիստ վնասվել է , և մինչ օրս չի վերանորոգվել և տարեցտարի ավելի ի խարխլվում : Համայնքում առկա է նաև հանդիսությունների սրահը << նախկին բուժարանի շենքը >> , որը կառուցվել է երկրաշարժից հետո ` ռուս շինարարների կողմից, այն ներկայումս նույնպես գտնվում է անմխիթար վիճակում: Առկա է նաև մեկ վագոն տնակ , որը 1989 թվականին տրվել է գյուղացիներին անհատույց օգտագործման :Համայնքի խմելու ջրի ներքին ցանցը գտնվում է խարխլված վիճակում , ենթարկվել է խիստ կորոզիայի :

Առկա է նաև համայնքապետի ծառայողական մեքենան. գտնվում է նորմալ վիճակում: Համայնքապետարանի շենքը նույնպես գտնվում է նորմալ վիճակում : Հին ջրատար- 3800 մ Նոր ջրատար- 2300 մ

Քանի որ համայնքում չկա նախադպրոցական հաստատություն ` ձեռք է բերվել բանավոր համաձայնություն Ստեփանավան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 4 մանկապարտեզի տնօրինության հետ , համաձայն որի համայնքի նախադպրոցական հասակի երեխաները հաճախեն և կրթվեն տվյալ նախադպրոցական հաստատությունում :Համայնքում չկա նաև համայնքային կենտրոն , ատաղապրոցական դաստիարակության կազմակերպումը որոշակի առումով անհնարին է դառնում , ուստի արտադպրոցական տարիքի պատանիները իրենց մասնակցությամբ ներգրավված են համայնքի հիմնական դպրոցում կազմակերպվելիք միջոցառումներին , իրենց մասնակցությամբ ապահովում են միջոցառումների բնականոն կազմակերպումն ու իրականացումը :Համայնքի հիմնական դպրոցում ամեն տարի կազմակերպվող մայիսի 9-ի <<Հաղթանակի օրվան >> նվիրված միջոցառումների կազմակերպումն իրենց մասնակցությամբ ապահովում են արտադպրոցական տարիքի պատանիները:Համայնքը չունի սպորտի կենտրոն,

ուստի համայնքի երիտասարդները իրենց մարզական կյանքը կազմակերպում են համայնքում առկա փոքրիկ խախահրապարակում , որը նախատեսված է ֆուտբոլային խախերի անցկացման համար, համայնքի երիտասարդները հարևան համայնքների երիտասարդների հետ կազմակերպում են սպորտային մրցարշավներ :

Աղետների ռիսկերի կառավարման ոլորտում համայնքի բնակչության իրազեկում , կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում : Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը և կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ:Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավվածությանը զուգահեռ , քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության՝ մասնավոր հատվածի մի շարք կազմակերպությունների << կապի , տրանսպորտի , բժշկական , սանիտարա-հիգիենիկ ծառայություններ և այլ ոլորտներից >> , առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովվումը : Համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքի ղեկավարը , որի անմիջական հանձնարարությամբ գործում է Քաղպաշտպանության շտաբ :Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան :

Համայնքը չունի նաև հացահատիկային կուլտուրաների , ցանկամշակության և բերքահավաքի տեխնիկա, տեխնիկայի բացակայության պատճառով հետաձգվում են բերքահավաքի աշխատանքները , որոնք հանգեցնում են բերքի կորստին և բնակլիմայական անբարենպաստ պայմանների արդյունքում՝ հաճախակի տեղացող անձրևների դեպքում՝ հանգեցնում են բերքի փչացմանը :Համայնքում առավել զարգացնել գյուղատնտեսություն << անասնապահությունը >> , այն կնպաստի համայնքի առավել զարգացմանը :Նախատեսվում է ձևավորել գյուղացիական կոպերատիվ , ներգրավվելով բոլոր շահագրգիռ բնակիչներին , որի արդյունքում հնարավոր կլինի ձեռք բերել նորագույն գյուղատնտեսական տեխնիկա , որի հաշվին կբարձրանա գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունաբերությունը և բերքատվությունը :Այս ամենի ապահովումը հնարավորություն կտա նվազագույնի հասցնել արտագաղթը:Համայնքի ազգաբնակչության մի մասը մեկնում է արտագնա աշխատանքների , այսպիսով՝ այս հանգամանքը նույնպես խոչընդոտ է և դժվարություն է համարվում համայնքի կայուն զարգացման գործում :

2.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՈՒԹՀՍ)

Համայնքի ուժեղ կողմերն են համարվում համայնքի վարչական տարածքում գտնվող Լոռե բերդաքաղաքը՝ իր բազմաթիվ տեսարժան վայրերով և խաչքարերով : Համայնքը կառուցված է հնամենի դամբարանադաշտի տարածքում: Դամբարաններից շատերը պեղված են :

Համայնքը 3 կողմից շրջապատված է խոր ձորերով , որոնք հարուստ են բարձրորակ բազալտի պաշարներով: Համայնքը հարուստ է սեփական աշխատուժով , սակայն աշխատատեղեր չլինելու պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքի << հիմնականում Ռուսաստանի Դաշնություն >> :

Համայնքի ուժեղ կողմերից է նաև Ստեփանավան քաղաքին մոտ լինելը: Համայնքի հեռավորությունը Ստեփանավան քաղաքից 2 կմ է , իսկ մարզկենտրոնից 38 կմ :

Լոռե բերդաքաղաքը տեղակայված է Լոռվա գողտրիկ բնության ամենահիասքանչ անկյուններից մեկում: Այն հիանալի վայր է բնության սիրահարների համար , ովքեր իրենց հանգիստը սիրում են անցկացնել բնության գրկում , նաև նրանց համար , ովքեր հետաքրքրվում են մեր հնամենի պատմության և միջնադարյան իրադարձություններով : Այս ամենը լայն հորիզոններ կարող է բացել զբոսաշրջության զարգացման համար : Պատմամշակութային արգելոց թանգարանի առկայությունը համայնքի ուժեղ կողմերից է , քանի որ այն հարուստ է մշակութային ավանդույթներով , հնամենի պատմությամբ , խաչքարերով , որը համայնքում բարձրացնում է զբոսաշրջության զարգացման մակարդակը և խթան է հանդիսանում համայնքի զարգացման գործում :

Համայնքի թույլ կողմերն են հանդիսանում՝ գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը : Ազգաբնակչության համար գերխնդիր է հանդիսանում նաև բանկերի կողմից տրվող բարձր տոկոսադրույքներով տրվող վարկերը , ֆինանսական միջոցների բացակայությունը , մանկապարտեզի բացակայությունը , հողերի սակավությունը և ոչ բարձր բերքատվությունը , << որը անգամ չի բավականացնում բնակչությանը՝ ընտանիքի հոգսերը հոգալու և անգամ անասնակերի ապահովման համար >> , գյուղտեխնիկայի պակասը : Համայնքի համար թույլ կողմեր են հանդիսանում նաև բնակլիմայական անբարենպաստ պայմանները, բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները , գյուղնշանակության հողերի սակավությունը , բյուջեի սղությունը : Համայնքը զուրկ է նաև համայնքի երիտասարդության համար զբաղվածության զարգացման , ժամանցի վայրերից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> <li>.Բանիմաց աշխատուժի առկայություն</li> <li>.Հիմնական դպրոցի առկայություն</li> <li>.Բուժկետի առկայություն</li> <li>.Գազաֆիկացման առկայություն</li> <li>.Զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող հնություններ</li> <li>.Ուղղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>.Հողաբաժնի քանակի քչություն.</li> <li>.Ֆինանսական ռեսուրսների բացակայություն</li> <li>.Ծնելիության նվազում</li> <li>.Արտագնա աշխատանքների մեկնողների թվի աճ</li> <li>.Թերզբաղվածության բարձր մակարդակ</li> <li>.Աշխատատեղերի պակաս</li> </ul>
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
<ul style="list-style-type: none"> <li>.Տուրիստական հետաքրքրություններ կայացնող վայրեր</li> <li>.Խմելու ջրի պաշարի առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>.Բնակլիմայական անբարենպաստ պայմաններ</li> <li>.Գյուղատնտեսական մթերքների գների նվազում</li> <li>.Տարերային աղետների վտանգ</li> <li>.Խիստ կլիմա.ցրտահարություն, երաշտ Արտագաղթ. Արտագնա աշխատանքների մեկնողների թվի աճ</li> </ul>

### 3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

#### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

Լոռի Բերդ համայնքի բնակչությանը՝ հիմնականում երիտասարդությանը համայնքի հետ կապելու, արտագաղթը կանխելու նպատակով՝ անհրաժեշտ էմ համարում ապահովել տնտեսական բնականոն զարգացում, բացել աշխատատեղեր, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, խթանել գյուղատնտեսության զարգացմանը, որի հետևանքով կբարձրանա բնակչության կենսամակարդակը՝ ինչպես նաև այս ամենը կարող է նպաստել և խթան հանդիսանալ համայնքում ծնելիության մակարդակի աստիճանը բարձրացնելու հարցում:

Նշված տեսլականին հասնելու համար՝ համայնքը որդեգրել է հետևյալ ռազմավարությունը.

Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականությունը:

Բացառել համայնքում ինքնակամ շինարարությունները, և ապօրինի հողազավթումները:

Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ – տնտեսական զարգացմանը: Չարգացման հիմնական ուղղությունների իրականացման համար խիստ կարևորում էմ տեղական իշխանությունների և համայնքի բնակչության սերտ համագործակցությունը: Համայնքի հետագա 5 տարիների զարգացման համար կարևորագույն էմ համարում համայնքի սեփականությունը հանդիսացող Բուժարանի շենքի վերանորոգումը, «Վերանվանումը հանդիսությունների սրահ», քանի որ վերանորոգումը կարող է խթան հանդիսանալ համայնքի գործազուրկ ազգաբնակչության համար աշխատատեղերի ամպահովման, համայնքի երիտասարդների համար զարգացած միջավայրի ստեղծման և կենսագործունեության համար: Վերանորոգումից հետո բարեկարգված սրահը «<16\* 4.30 քմ մակերեսով >> կօգտագործվի տարբեր միջոցառումների և հավաքույթների համար:

Այսպիսով, կլուծվի երիտասարդների ժամանցն ու հանգիստ անցկացնելու հարցը, ազգաբնակչության համար կբացվեն աշխատատեղեր, կզարգանա համայնքային կյանքը, և որոշակի առումով մոտ կգտնվենք հեռվում նշմարվող համայնքի կայուն զարգացման հեռանկարին:

#### 4. ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Լոռի Բերդ համայնքի բյուջեի սղության պատճառով ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը չեն կարող իրականացվել համայնքի բյուջեի հաշվին, և ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա <<բավարար>> միջոցներ , ուստի անհրաժեշտ էմ համարում գումար ապահովվելու և ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ գտնելու համար մշակել ծրագրեր և ներկայացնել ՀՀ Կառավարությանը՝ հավանության չարժանանալու դեպքում գտնել և դիմել բարերարների և միջազգային կազմակերպությունների՝ ծրագրերի ֆինանսավորումն ապահովելու նպատակով :

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացումը նախևառաջ կնպաստի համայնքի զարգացմանը՝ դրանով իսկ խթան հանդիսանալով համայնքի ազգաբնակչության՝ գործազուրկ խավի համար աշխատատեղերի ապահովման , ծրագրերի իրականացումը կնպաստի նաև արտագաղթի և արտագնա աշխատանքների մեկնողների նվազեցմանը, այդպիսով համայնքի երիտասարդությունը միտված կլինի մնալ համայնքում , կապվել վերջինիս հետ, իրեն պետքական համարել համայնքի զարգացման և կայուն ու զարգացած համայնք ունենալու հետագա գործընթացներում :

Համայնքում՝ ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացումը՝ կբարձրացնի ազգաբնակչության աշխատունակության մակարդակը , երիտասարդությունը ավելի ամուր կապերով կկապվի համայնքի հետ, համայնքի կարիքների և կարիքների բավարարման գործընթացներում , այլևս կարիք չի լինի արտագնա աշխատանքների մեկնելու , կլուծվի համայնքի ազգաբնակչության՝ արտագնա աշխատանքների մեկնելու հարցը՝ աշխատատեղերի բացումը հնարավորություն կտա վերջիններիս՝ իրենց սեփական համայնքում ամրագրվելու՝ մնալ և աշխատել բավարարել իրենց ընտանիքի կարիքները և հաստատվել մեր հող ու ջրում, ինչպես նաև այս ամենի բնականոն ընթացքը, կապահովվի համայնքի ազգաբնակչության թվաքանակի աճը՝ այսինքն

Խթան կհանդիսանա համայնքի ծնելիության աճի մակարդակի բարձրացման գործընթացում :

ՀՀԶԾ- ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են `

.Համայնքի սեփական եկամուտներ

.Ներքին պաշտոնական դրամաշնորհներից

.Բարեգործություն. նվիրատվություն

.Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից

.Այլ աղբյուրներից

ՀՀԶԾ- ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ , նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովվել:



## 5. ՀՀԶԾ մոնիթորինգ

ՀՀԶԾ-ի մոնիթորինգը իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա , որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը , ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրերի իրականացման ընթացքը :

# Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

## «Համայնքային կենտրոն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում աշխատատեղերի բացում ,ազգաբնակչության զարգացվածության բարձրացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Սենյակների վերանորոգում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	9	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Սենյակների ավելացում և վերանորոգում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3	0	0	0	0
	2.						
	Սենյակների վերանորոգում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		3	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախագծի պատվիրում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Անհրաժեշտ նյութերի ձեռքբերում 2.2.Սենյակների վերանորոգում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝45 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 50 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2.Նախագծի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչությունը ,ինչպես նաև հարևան համայնքներից						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.-2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է Համայնքային սեփականություն հանդիսացող՝ վերանորոգումից հետո Համայնքային կենտրոնի սենյակների վերանորոգում ,խմբակների բացում ,նախատեսվում է նաև վերանորոգված մեկ սենյակ տրամադրել գրադարանի համար ` համայնքն ունի 3000 անուն գիրք :						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Համայնքի կենտրոնական փողոցի ասֆալտապատում»**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բարեկարգված փողոցը խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման համար, քանի որ տվյալ փողոցով է անցնում համայնքի վարչական տարածքում գտնվող պատմամշակութային <<Լոռե բերդաքաղաք>>-ը, ինչպես նաև կենտրոնական փողոցի վրա է գտնվում համայնքի հիմնական դպրոցը						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարեկարգ ճանապարհի վերանորոգում քառ.մետր	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	6000 մետր	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Բարեկարգ ճանապարհի վերանորոգում քառ.մետր	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	6000 մետր	0	0
	2.						
	Բարեկարգ ճանապարհի վերանորոգում քառ. մետր	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0				6000 մետր			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախագծի պատվիրում 1.2.Ֆինանսական միջոցների հայթայթում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Անհրաժեշտ նյութերի ձեռքբերում 2.2.Փողոցի ասֆալտապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝50 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 58 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 108 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2.Աշխատուժի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնակլիմայական անբարենպաստ պայմանները՝ անձրևներ, սելավներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչություն, Ջրոսաշրջիկներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019թ.-2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է համայնքի կենտրոնական փողոցի ասֆալտապատում:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Արարողությունների և հանդիսությունների սրահ»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի ազգաբնակչության համար կրացվեն աշխատատեղեր՝ կլուծվի համայնքի գործազուրկ խավի աշխատանքի հարցը, կլուծվի երիտասարդների զբաղվածության հարցը						
Ծրագրի անմիջական նպատակ	Սենյակների վերանորոգում և ավելացում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ձեռք է բերված նախագիծ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1	0	0	0	0	0
	2.						
	Սենյակների վերանորոգում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
	0	5					
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Ֆինանսավորման առկայություն  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Անհրաժեշտ նյութերի ձեռքբերում 2.2.Սենյակների վերանորոգում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝55 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 60 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2.Աշխատուժի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչությունը՝ ներառյալ հարևան համայնքների ազգաբնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.-2017թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շենքը վերանորոգելու և նպատակային օգտագործելու դեպքում կրացվեն որոշակի աշխատատեղեր, վերանորոգված սենյակները կօգտագործվեն տարբեր միջոցառումների անցկացման համար, այժմ համայնքի ազգաբնակչությունը օգտվում է Ստեփանավան քաղաքի նմանատիպ սրահների ծառայությունից, որոնք շատ թանկ են :						

**Մ Ո Ն Ի Պ Թ Ի Լ Գ Ի Ա Ն Ա Ն Գ Ի Ի**  
(LPIPI PPIPI)  
(..... բնիկաններ)

Տնօրենի անունը և գրասենյակի հասցեն	Ցուցանիշի փաստացի արժեք (2015)	Ցուցանիշի կախարհային արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կախարհային արժեք (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կախարհային արժեք (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կախարհային արժեք (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կախարհային արժեք (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կախարհային արժեք (2021)	Տվյալների հավաստագրման մարմնի կազմակերպչություն		Ցուցանիշի ստացման արդյունք	Ցուցանիշի ստացման մեթոդ	
																		Վիստայի անուն	Տարեկան			
<b>Համայնքի կայանի զարգացում</b>																						
Արտադրության շնչից ցածր գույնով բնույթների հարաբերությունը համայնքի բնույթների ընդհանուր թվին (արտադրական տոկոսով)	43%	43%	40%	40%	40%	38%	38%	38%	36%	36%	36%	33%	33%	33%	30%	30%	30%		X	Արտադրության ներքին (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Ջերմուկ համայնքների համալիր համայնքացուցանարաններ)	Փաստաթղթային ուսումնասիրություն/արդարացի	
Համայնքի սեփական կազմակերպչական արտադրական տոկոսով	2%	2%	1%	1%	1%	2%	2%	2%	3%	3%	3%	2%	2%	2%	2%	2%	2%		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտադրական տոկոսով, չնայած համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով	1.00%	1%	1%	1%	1%	2%	2%	2%	2%	2%	2%	1%	1%	1%	1%	1%	1%		X	<< Ուսիկացուցանարան	Հարցում	
<b>1. Գործարար միջավայրի զարգացում և ձեռնարկատիրական կազմակերպչություն</b>	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0					
<b>2. Համայնքի գոյի և զարգացման միջոցների կառավարում</b>																						
<b>3. Նախագիտական և արտադրության զարգացման ծրագրեր</b>	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0					
Առանձնապես նախարարական հաստատություն (այն համայնքներում, որտեղ առանձին նախարարական կա)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0					
Նախարարական հաստատություններում ընդգրկված երկհասնելի թվաքանակի հարաբերությունը համայնքի նախարարական տարիքի երկհասնելի ընդհանուր թվին, արտադրական տոկոսով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Մեղմների թվաքանակությունը նախարարական կազմակերպչական կազմակերպչական	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0					
Արտադրության հաստատություններում ընդգրկված երկհասնելի թվի հարաբերությունը համայնքի ընդհանուր թվին, արտադրական տոկոսով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Մեղմների թվաքանակությունը արտադրական կազմակերպչական	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Արտադրական հաստատությունների համալիր երկհասնելի ընդհանուր թվին	Հարցում կամ խնդիր հարցազրույց/Ֆորդուս	
<b>4. Այլով մշակութային և մարզական կառույցների կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ</b>																						
Համայնքացուցանարանի կազմակերպչական միջոցառումների թիվ	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4	4		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Համայնքում գործող մշակութային կառույցների թիվ																			X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Մշակութային խմբակներում ընդգրկված երկհասնելի ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երկհասնելի ու պատանիների թվին՝ արտադրական տոկոսով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Մեղմների թվաքանակությունը մշակութային խմբակներում	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Արտադրական հաստատությունների համալիր երկհասնելի ընդհանուր թվին	Հարցում կամ խնդիր հարցազրույց/Ֆորդուս	
Համայնքացուցանարանի միջոցներով կազմակերպված երկհասնելի ու պատանիների սպորտընկերություններ համայնքի ընդհանուր մշակութային օջախներ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Համայնքացուցանարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
Համայնքային գրադարանի (նկարչական կենտրոնի) գրադարանի) ստեղծումը	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո	այո		X	Համայնքացուցանարան	Դիտարկում	
Գրադարանը օգտագործողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ, արտադրական տոկոսով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Գրադարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	
<b>5. Համայնքի բնակչության սոցիալական վարչապետություն</b>																						
<b>6. Ֆիզիկական կուլտուրայի և ստոր սպորտի կազմակերպչություն</b>																						
Համայնքացուցանարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0					
Մարզական խմբակներում ընդգրկված երկհասնելի ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երկհասնելի ու պատանիների ընդհանուր թվին, արտադրական տոկոսով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0		X	Համայնքացուցանարան	Փաստաթղթային ուսումնասիրություն	















